

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ



Մարզկենտրոնը՝

ք. Կապան

Տարածաշրջանները՝

Կապան

Գորիս

Միսիան

Մեղրի

Քաղաքները՝

Կապան

Գորիս

Միսիան

Քաջարան

Մեղրի

Ագարակ

Դաստակերտ

Տարածքը	4 506 քառ. կմ
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	15.1
Համայնքներ, 2020թ. տարեսկզբի դրությամբ	8
Քաղաքներ	7
Գյուղեր	131
Բնակչության թվաքանակը 2020թ. տարեսկզբի դրությամբ	137.3 հազ. մարդ
<i>այդ թվում՝</i>	
քաղաքային	93.2 հազ. մարդ
գյուղական	44.1 հազ. մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019թ.,%	4.6
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ.,%	67.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր	306 362.5 հա
այդ թվում՝ վարելահողեր	43 962.1 հա

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին:

Սյունիքի մարզը զբաղեցնում է Ջանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Ջանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ):

Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Կապան քաղաքից հարավ-արևելք՝ Ծավ գետի հովտում է գտնվում «Սոսու պուրակ» պետական արգելավայրը, որն իր մեջ ներառում է Կովկասում ամենախոշոր արևելյան բնական սոսիների ռելիկտային պուրակը, զբաղեցնելով 64.2 հա տարածք: Պուրակի որոշ ծառերի տարիքն անցնում է մի քանի հարյուր տարուց: Որոշ ծառերի բների տրամագիծը հասնում է 3 մ-ի, իսկ բարձրությունը՝ 30-35 մ-ի: Այն սահմանակից է նեղ կիրճերով, թավուտ անտառներով «Շիկահող» պետական արգելոց տեղամասին, որը գտնվում է Կապան քաղաքից 25 կմ հեռավորության վրա, Խուստուփ լեռան հարավ-արևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիս-արևելյան լանջերին, Ծավ և Շիկահող գետերի վերին ավազաններում, 700 - 2 800 մ բարձրություններում, զբաղեցնելով 12 137 հա: Ունի հազվագյուտ բնություն, թավուտ անտառներ, նեղ կիրճեր, հարուստ կենդանական աշխարհ, տարածքում կան պատմամշակութային հուշարձաններ:

«Խուստուփ» պետական արգելավայրը զբաղեցնում է 6 946.7 հա և ընդգրկում է Մեղրու լեռնաշղթայի հարավ-արևմտյան ճյուղավորության Խուստուփ լեռնազանգվածի բարձր լեռնային հատվածը: Այն ապահովում է Խուստուփ լեռնազանգվածի անտառային գոտու վերին հատվածի, մարգագետնատափաստանային և մարգագետնային բնական էկոհամակարգերի զարգացման բնականոն ընթացքը, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության հուշարձանների, բնության ժառանգության պահպանության, ինչպես նաև բնական պաշարների կայուն օգտագործումը:

«Արևիք» ազգային պարկ տեղամասի տարածքում առկա է լանդշաֆտային գոտիների գրեթե ողջ համակարգը՝ սկսած ցածր և միջին լեռնային կիսաանապատներից մինչև բարձր լեռնային տափաստաններն ու Մեղրի գետի վերին հոսանքների մերձալպյան տիպի լանդշաֆտը: Տարածքը կազմում է շուրջ 30 354 հա: Հատուկ ուշադրության առարկա են վայրի բնու-թյան հազվագյուտ և ոչնչացող տեսակները: Այստեղ հայտնաբերվել է Հայաստանի Կարմիր գրքում գրանցված զուլավոր բորենի:

«Բողաքար» պետական արգելավայր տեղամասը գտնվում է Ջանգեզուրի լեռնաշղթայի հարավային լանջերին՝ 1 400-2 100 մ բարձրություններում: Ստեղծվել է բուսական ու կենդանական աշխարհի էնդեմիկ և հազվագյուտ տեսակների պահպանության նպատակով:

«Ջանգեզուր» պետական արգելավայրը զբաղեցնում է Ջանգեզուրի լեռնաշղթայի Ողջի և Գեղի գետավազաններն ու Բարգուշատի լեռնաշղթայի հարավային լանջերը և սահմանակցում է Մեղրու լեռնաշղթային՝ արևելքում:

«Մև լիճ» պետական արգելավայր տեղամասը գտնվում է Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Մեծ Իշխանասար լեռան խառնարանային մասում՝ 2 658 մ բարձրության վրա: Լիճը կազմավորվել է ձնհալից և բնական աղբյուրներից, լցվելով լեռան խառնարանը:

Առանձնացվում են 102 տեսակի բույսեր: Արգելավայրի նպատակն է պահպանել բարձր լեռնային հրաբխային ծագման եզակի ջրավազանը և նրա հարակից բնատարածքները:

«Ձանգեզուր» կենսոլորտային համալիր ՊՈԱԿ-ի մասնաճյուղերի և շրջակայքի հարուստ բնապատմական ժառանգությունը հնարավորություն է տալիս կազմակերպել զբոսաշրջության տարատեսակ ձևեր (էկո-տուրիզմ, պատմամշակութային և գիտաճանաչողական), համակցված տուրեր և արշավներ:

Ողջի գետի աջ ափին, անտառում է գտնվում Վահանավանքը (X-րդ դար)՝ պատմական Սյունիքի հոգևոր և մշակութային կենտրոններից մեկը, իսկ 25 կմ հեռավորության վրա՝ նեղ կիրճերով, թավուտ անտառներով «Շիկահող» պետական արգելոցը:

Մարզի ամենագրավիչ վայրերից մեկը, հայկական միջնադարյան ճարտարապետության հուշարձան Տաթևի վանական համալիրն է (IX դար), որտեղ 1390-1435 թթ. գործել է Տաթևի նշանավոր համալսարանը:

2010թ.-ին շահագործման է հանձնվել 5.7 կմ երկարությամբ աշխարհի ամենաերկար «Տաթևեր» ճոպանուղին (առավելագույն բարձրությունը 380 մ), որն անցնում է Որոտան գետի կիրճով, ձգվում սարերի վրայով և Հալիձոր գյուղից հասնում Տաթևի վանական համալիր:

Որոտանի կիրճում են գտնվում Տաթևի ՀԷԿ-ը՝ Որոտանի ՀԷԿ-երի համակարգի առաջնեկը և Շամբի ջրամբարը, որտեղից 18 կմ երկարությամբ թունելով ջուրը հասնում է Տաթևի ՀԷԿ-ի տուրբիններին: 2012թ. գործարկվեց Հին Խնձորեսկի երկու ձորափը

(Ղանդունց նովն ու Ներքին թաղը) իրար միացնող իր տեսակի ու չափի մեջ եզակի կախովի կամուրջը: Կամուրջը հսկա ձորի մի ափից մյուսը ձգվում է ավելի քան 160 մետր: Բարձրությունն ամենախոր տեղում 63 մ է: Կամրջի բանուկ զանգվածը կախված է ամուր ու ձիգ ճուպաններից (կախովի կամուրջ), այդ պատճառով էլ քայլելիս կամուրջը ճոճվում է, այդ իսկ պատճառով ժողովուրդն այն անվանել է «ճոճվող կամուրջ»:

Սիսիան քաղաքից 6 կմ հեռավորության վրա է գտնվում Շաքիի ջրվեժը՝ Փոքր Կովկասի լեռների ամենախոշոր ջրվեժը (բարձրությունը 18 մ):

Մարզի պատմամշակութային հուշարձանների մեջ հայտնիներից են «Ձորաց քարեր» հուշարձանախումբը, Բաղաբերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Տաթևի, Որոտնա, Բղենու վանքերը, Վահանա-վանքի և Երիցվանքի վանական համալիրները, Աղիտուի դամբարանային հուշարձանը, Սիսիանի նեոլիթի ժամանակաշրջանի դամբարանաբլուրը, Մեղրի քաղաքի փոքր թաղի եկեղեցին և քաղաքի պաշտպանական նշանակության աշտարակները:

Սիսիան քաղաքից 3.2 կմ դեպի հյուսիս գտնվում է «Ձորաց քարեր» հուշարձանախումբը, որը հայտնի է նաև Քարահունջ անունով: Այն մեգալիթյան դարաշրջանի (Ք.ա. II հազարամյակ) ծնունդ է: «Ձորաց քարեր»-ը հանդիսանում են աշխարհում հայտնի հնագույն մեգալիթիկ համալիրներից և աստղադիտարաններից մեկը, հնդեվրոպական քաղաքակրթության քարեդարան-վկայարան, որի գաղտնիքները դեռևս բացահայտված չեն գիտության կողմից: «Ձորաց քարեր»-ը հաճախ անվանում են «հայկական Մթոունհենջ»՝ նկատի ունենալով, որ ուսումնասիրողների կարծիքով այստեղ ևս առկա է մեգալիթիկ աստղադիտարան:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, ար-տադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝

գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հուրք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ):

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերա-կշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են:

2019թ.-ին մարզի տնտեսության հիմնական հատ-վածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն` 16.6%,
- գյուղատնտեսություն` 6.9%,
- շինարարություն` 4.3%,
- մանրածախ առևտուր` 1.5%,
- ծառայություններ` 1.3%:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին:

Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագի-տացած է բուսաբուծության (մասնավորապես` հացա-հատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես` խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրակա-նացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանս-պորտով (ճոպանուղի):

Մարզի տարածքով է անցնում Հայաստանն Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպե-տական ճանապարհին` տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս:

Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Կապան քաղաքը (2020թ. տարեսկզբին` 42.3 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3 201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբե-րությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, այլումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Քաջարան քաղաքը (2020թ. տարեսկզբին` 6.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 326 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից` 25 կմ: ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է` պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա:

Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է: Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում

առանձնանում են սննդամթերքի և պատ-րաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 20.4 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 65 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, այումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Միսիան քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 14.8 հազ. մարդ), գտնվում է Երևանից 201 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունները:


Դաստակերտ քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 221 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 4.5 հազ. մարդ), գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքը (2020թ. տարեսկզբին՝ 4.1 հազ. մարդ), գտնվում է Երևանից 388 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 87 կմ, տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային և մաքսակետերը:

ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍԵՌԱՏԱՐԻՔԱՅԻՆ ԲՈՒՐԳԸ,
2020թ. հունվարի 1-ի դրությամբ

տղամարդ - 66 608 տարիք կին -70 704 %



ՄԱՐԱԾԱՆ ԱՌԵՎՏՐԻ ՕԲՑԵԿՏՆԵՐ

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	415	429	407	417	510
<i>այդ թվում՝</i>					
խանութներ	226	263	265	275	402
կրպակներ	135	112	84	82	51
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	-	-	-	-	-
սպառողական ապրանքների շուկաներ	7	5	4	6	5
առևտրի այլ օբյեկտներ	47	49	54	54	52

ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Քանակը				
	2015	2016	2017	2018	2019
Պետական նախադպրոցական	53	55	59	50	51
Պետական հանրակրթական	121	118	118	117	117
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղ-ձագործական կենտրոններ	18	18	18	17	17
Պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական ¹	4	4	5	5	5
Պետական միջին մասնագիտական ուսումնական	7	7	7	7	7
Պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1
Պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	3
Ոչ պետական բարձրագույն ուսումնական	1	1	1	1	1

ՔԱՂԱՔՆԵՐ

Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ²
Կապան	42 184
Գորիս	20 405
Սիսիան	14 757
Քաջարան	6 942
Մեղրի	4 487
Ագարակ	4 122
Դաստակերտ	283

¹ Ներառյալ այն միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները, որոնք իրականացնում են նախնական (արհեստագործական) ծրագիր:

² Հայաստանի Հանրապետության քաղաքների բնակչության թվաքանակը ներկայացված է Հայաստանի Հանրապետության 2011թ. մարդահամարի հիմքով վարվող բնակչության ընթացիկ հաշվառմամբ:

ԳՅՈՒՂԵՐ

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
Կապանի տարածաշրջան		
1.	Ագարակ	157
2.	Աղվանի	62
3.	Աճանան	187
4.	Անդոկավան	92
5.	Անտառաշատ	100
6.	Առաջածոր	121
7.	Արծվանիկ	546
8.	Բարիկավան	182
9.	Գեղանուշ	235
10.	Գոմարան	44
11.	Գեղի	125
12.	Գեղավանք	3
13.	Կարդ	-
14.	Կիցք	-
15.	Վերին Գեղավանք	-
16.	Քարուտ	-
17.	Դավիթ Բեկ	628
18.	Եղեգ	68
19.	Եղվարդ	222
20.	Լեռնածոր	340
21.	Կավճուտ	57
22.	Կաթնառատ	19
23.	Ձազիկավան	50
24.	Ներքին Գիրաթաղ	-
25.	Վերին Գիրաթաղ	-
26.	Խդրանց	52
27.	Ծավ	280
28.	Շիշկերտ	43
29.	Կաղնուտ	81
30.	Ձորաստան	60
31.	Ճակատեն	138
32.	Ներքին Խոտանան	64
33.	Ներքին Հանդ	84
34.	Նորաշենիկ	115
35.	Նոր Աստղաբերդ	36
36.	Աջաբաջ	11
37.	Գետիշեն	58
38.	Ոչեթի	-
39.	Շիկահող	191
40.	Շրվենանց	58

¹ ՀՀ մարզերի գյուղերի այս տվյալների սկզբնաղբյուրը՝ համայնքների կողմից տարեկան կտրվածքով ներկայացվող «Գյուղական բնակչության սեռատարիքային կազմը» վիճակագրական հաշվետվություններն են: Այդ սկզբնաղբյուրներով ՀՀ 954 գյուղական բնակավայրերի մշտական բնակչության թվաքանակների հանրագումարը՝ ամբողջությամբ և ըստ մարզերի, ունի որոշակի շեղում բնակչության ընթացիկ հաշվառման համանուն տվյալներից, որոնք խարսխված են Արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման և Ոստիկանության (ճշգրտված՝ տ/տ կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքներով) վարչական ռեգիստրների տվյալների վրա: Ընդ որում, վերջինս վերագնահատված է ՏՏԿԱՀ արդյունքներով ստացված միգրացիայի տվյալներով (շեղումը՝ 01.01.2020թ.-ի դրությամբ ՀՀ մասշտաբով՝ կազմել է +10.8%): Շեղումը հիմնականում պայմանավորված է գյուղերի միջև տվյալ տեղեկատվության գրանցման, փոխանակման, համադրման և անվանական տվյալների մակարդակով ստուգաճշտման համակարգի բացակայությամբ:

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
41.	Չափնի	109
42.	Սյունիք	664
43.	Բարգուշատ	44
44.	Դիցմայրի	61
45.	Խորձոր	5
46.	Սգնակ	107
47.	Սրաշեն	82
48.	Սևաքար	149
49.	Վանեք	50
50.	Վարդավանք	71
51.	Վերին Խոտանան	174
52.	Տանձավեր	166
53.	Տավրուս	87
54.	Ուժանիս	84
55.	Փուխրուտ	14
56.	Քաջարան	200
57.	Օխտար	73
Գորիսի տարածաշրջան		
1.	Ակներ	1 102
2.	Արավուս	171
3.	Բարձրական	109
4.	Խնածախ	788
5.	Խնձորեսկ	2 001
6.	Խոզնավար	362
7.	Խոտ	933
8.	Կոռնիձոր	1 052
9.	Հալիձոր	608
10.	Հարթաշեն	690
11.	Հարժիս	752
12.	Ներքին Խնձորեսկ	235
13.	Շինուհայր	2 631
14.	Շուտնուխ	146
15.	Աղբուվաղ	-
16.	Վանանդ	-
17.	Ձորակ(Փայտաւղշակման գ.կ.)	-
18.	Որոտան	287
19.	Սվարանց	263
20.	Վաղատուր	388
21.	Վերիշեն	2 121
22.	Տաթև	830
23.	Տանձատափ	88
24.	Տեղ	2 195
25.	Քաշունի	12
26.	Քարահունջ	1 347
27.	Քարաշեն	531
Մեղրու տարածաշրջան		
1.	Ալվանք	255
2.	Գուղեմնիս	35
3.	Լեհվազ	556
4.	Լիճք	117
5.	Կարճևան	218

	Անվանումը	Մշտական բնակչության թվաքանակը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ ¹
6.	Կուրիս	34
7.	Նոնաձոր	128
8.	Շվանիձոր	241
9.	Վահրավար	30
10.	Վարդանիձոր	156
11.	Այգեձոր	0
12.	Թխկուտ	53
13.	Տաշտուն	103
Միսիանի տարածաշրջան		
1.	Ախլաթյան	523
2.	Աղիտու	337
3.	Անգեղակոթ	1 508
4.	Աշոտավան	469
5.	Արևիս	43
6.	Բայաք	147
7.	Բնունիս	122
8.	Բռնակոթ	1 831
9.	Գետաթաղ	130
10.	Գորալք	427
11.	Դարբաս	542
12.	Շամբ	318
13.	Թանահատ	19
14.	Թասիկ	266
15.	Իշխանասար	199
16.	Լձեն	52
17.	Լոր	300
18.	Օդուկ	323
19.	Հացավան	236
20.	Մուցք	211
21.	Նժդեհ	96
22.	Ցղունի	41
23.	Նորավան	392
24.	Շաղատ	908
25.	Շաքի	1 266
26.	Շենաթաղ	315
27.	Որոտան	233
28.	Սալվարդ	215
29.	Սառնակունք	463
30.	Սպանդարյան	416
31.	Վաղատին	550
32.	Տոյորս	409
33.	Տորունիք	106
34.	Ուլծ	453

**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2019թ.**

	Ընդամենը	նրանցից՝ including:	
		կանաչ ¹	տղամարդիկ ¹
Բնակչությունը, մարդ	10 000	5 146	4 854
Ծնվածներ, մարդ	98	48	50
Մահացածներ, մարդ	87	42	45
Ամուսնություններ	46	X	X
Ամուսնալուծություններ	11	X	X
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակավայրերում, քառ.մ	31.2	X	X
Կրթության ոլորտ, հաճախումը կրթության, մարդ՝			
նախադպրոցական	336	165	171
հանրակրթական	1 244	605	639
Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	189	123	66
նախնական մասնագիտական (արհեստագործական)	25	5	20
միջին մասնագիտական	68	31	37
բարձրագույն մասնագիտական	132	64	68
Առողջապահության ոլորտ՝			
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	38 001
Մարզիկներ, մարդ	168	31	137
Զբաղվածներ, մարդ	4 213	1 665	2 548
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-
գիտության թեկնածուներ	-	-	-
ուսուցիչներ	123	108	15
բժիշկներ	18
միջին բուժանձնակազմ	50
Գործազուրկներ, մարդ	706	445	261
Սոցիալական ապահովության ոլորտ			
ընդամենը կենսաթոշակատուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1 652	966	686
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	205	X	X
Հաճախումների քանակը տարվա ընթացքում			
գրադարան	18 277
թատրոն	1 107
համերգ	-	-	-
թանգարան	1 345
Բրավակալան ոլորտ			
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	57	X	X
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	25	X	X
միջին ծանրության	18	X	X
ծանր	11	X	X
առանձնապես ծանր	3	X	X

¹ Ցուցանիշները հաշվարկային են: